ԴԱՀԱԿԱՆ ՑԵՂԵՐԸ ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻՑ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՈՒՏՔ ԸՆԿԱԾ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Ս. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կասպից ծովից հարավ-արևմուտք ընկած շրջանները ստրատեգիական կարևոր դիրքեր ունեին և՛ հին Ատրպատականի և՛ հին Հայաստանի համար։ Սրանց վրայով էին Ատրպատականի և Հայաստանի խորքերը թափանցում Դերբենդի և հարևան լեռանցքներով Արևելյան Անդրկովկաս ներխուժած «հյուսիսականները»՝ Հյուսիսային Կովկասի և Մերձկասպյան հարթավայրի հարակից շրջանների սարմատական ու լեռնցի վեյնախա-դաղստանյան ցեղերը, ինչպես նաև Հյուսիս-արևելյան Անդրկովկասում բնակվող սրանց ցեղակիցներն ու դաշնակիցները՝ մազքութների գլխավորությամբ։

Ատրպատականն ու Հայաստանը իրենց դինաստիական թագավորությունները դարձնելուց հետո՝ Արշակունիները ստիպված էին մտահոգվել խնդրո առարկա շրջաններում այնպիսի ռազմունակ տարրի ստեղծումով, որի վրա հենվելով կարողանային դիմագրավել «հյուսիսականներին» և ապահովել Արշակունյաց կոնֆեդերացիայի մեջ մտած երկրների անվտանգությունը նրանց ներխուժումներից։ Դա հույժ անհրաժեշտ էր դարձել մանավանդ 72 թ. հետո, երբ ալանների գլխավորությամբ տեղի ունեցած «հյուսիսականների» ներխուժումն[1] ու հաջորդ իրադարձություններն Արշակունիներին ցույց տվեցին, թե որքան թույլ էին իրենց դիրքերը տեղական բնակչության միջավայրում։

Վերջին առիթով խիստ ուշագրավ է Մովսես Խորենացու հետևյալ հաղորդումը. «Յետ մեռանելոյ վերջնոյ Արշակայ թագաւորի Պարսից, թագաւորեցուցանէ մերս Արտաշէս՝ զհամանուն իւր զԱրտաշէս որդի նորին ի վերայ Պարսից աշխարհին։ Եւ ոչ կամեցան հնազանդել նմա բնակիչք լերինն, որ անուանեալ կոչի յիւրեանց լեզուն Պատիժահար դաւառ, որ է Գեղմանց լեռն, եւ ծովեզերեայք, եւ այսր եւս քան զնոսա. նա եւ Կասբից երկիրն յայն սակըս ապստամբէն ի մերոյ արքայէն։ Վասն որոյ առաքէ ի վերայ նոցա Արտաշէս զՍմբատ ամենայն զօրաւքն Հայոց, ինքն արքայ յուղարկ երթալով աւուրս եաւթն։ Իսկ Սմբատայ երթեալ հնազանդէ զամենեսեան. բայց զերկիրն Կասբից աւերեալ՝ առաւել քան զԱրտազեան գերի ածէ ի Հայս. ընդ որս եւ զՋարդմանոս անուն թագաւոր նոցին»[2]։

Հաշվի առնելով ստեղծված վիճակը, Արշակունի գահակալ եղբայրները՝ Իրանի արքայից արքա Վաղարշ I-ը (51—80), Մեծ Հայքի թագավոր Տրդատ I-ը (52—88 թթ., օրինական գահակալ 66 թ.) և Ատրպատականի թագավոր Բակուրը որոշում են Հայաստանի, Ատրպատականի և Աղվանքի ծայրամա-

---

[1] *Այն իր արձագանքն է գտել ինչպես Հովսեպոս Փլավիոսի և Մովսես Խորենացու, այնպես էլ նրանցից օգտված օտար և հայ ուրիշ մատենագիրների երկերում։*

[2] *«Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց», Տփղիս, 1913, էջ 182—183։*

սերը կազմող այս շրջաններում առանձին հատվածներով բնակեցնել դահական տարբեր ցեղերի։ Ընդ որում, Արշակունի դահակալ եղբայրներն այս շրջանների ունեցած ստրատեգիական կարևոր դիրքի հետ միասին նկատի էին առել նաև այն հանգամանքը, որ այստեղ գտնվող Կուր-Արաքսյան հարթավայրն ուներ ձմեռային հարուստ արոտավայրեր, իսկ հարևան լեռնային շրջանները՝ ամառանոցային փարթամ արոտներ[3]։

Դահերը Արշակունիների վաղեմի հենարանն էին։ Նրանց ցեղերից մեկի՝ ապառների (Ἀπαρνοι) տոհմա-ցեղային ավագանուց էր սերում Արշակունի արքայատոհմը։ Դահական ցեղախմբի մեջ նրանցից բացի մտնում էին նաև քսանթները (Ξάνθοι) և պիսուրները (Πίσσουροι), որոնք վաշկատուն կյանք էին վարում Կասպից ծովի և Ամու-Դարյա (Օքսոս) գետի[4] միջև՝ այժմյան Թուրքմենստանի տարածքում։ Գլխավորապես սրանցից և սակերից էին համալրվում պարթևական բանակի «սկյութական» հորջորջված հեծյալ զորամասերը[5]։ Դահերը, սակերը և նրանց ցեղակից «վրկանցիներն» էին Վաղարշ I-ի նախորդ պարթևական դահակալների՝ հատկապես Արտավան III-ի (12—38) և Գոդերզի (Գոտարզ՝ 38—51) նեցուկը հռոմեական դրածոների և իրենց մյուս հակառակորդների դեմ մղվող պայքարում[6]։ Այդ հանգամանքին քանիցս անդրադարձել է Տակիտոսը[7]։

Խնդրո առարկա շրջաններում հաստատված դահական ցեղերից ամենից շատ տվյալներ (ուղղակի և անուղղակի) մեզ հասել են Արշակունիների «արքայական» ապառն ցեղի վերաբերյալ, որին հին հայերը կոչում էին ապարհացի (կամ ապարհայիկ)[8]։ V դ. Եղիշեն ապարհացիներին հիշատակում է գեղերի (գելերի, որոնք ապրում էին Գիլանում), կատիշների (անտիկ աղբյուրների կադուսիների) և հոների (խոների՝ Կասպք-Փայտակարանի սարմատական ծագմամբ ցեղերից մեկի) հետ միասին[9]։ Ապարհացիների ցեղանունն է առկա արաբ մատենագիրների կողմից միջնադարյան Ատրպատականի (Իրանական Ադրբեջան) հյուսիսում հիշատակված ابرشتويم լեռան անվան մեջ[10], որի իմաստն է «Ապար(հ)-զոհասար», այսինքն՝ «Ապարհ (ցեղի) զոհասար»[11]։

---

3 Անասուններին ամառնարոտի և ձմեռնարոտի վայրերով ապահովելը պարտադիր պայման էր թե՛ դահերի, թե՛ առհասարակ քոչվորական ու կիսաքոչվորական անասնապահությամբ զբաղվող մյուս բոլոր ցեղերի համար։

4 Strabo, XI, 8, 2.

5 Г. А. Кошеленко, Внутриполитическая борьба в Парфии («Вестник древней истории», 1963, № 3, стр. 65).

6 М. Е. Массон, Новые данные по древней истории Мерва («Вестник древней истории», 1951, № 4, стр. 143—160); նույնի՝ Народы и области южной части Туркменистана в составе Парфянского государства («Труды ЮТАКЭ», т. V, 1955, стр. 15).

7 Tacitus, Annales, II, 3; VI, 36, 41, 44; XI, 8, 10.

8 Ապարհացիների անդրկովկասյան հատվածների մասին ավելի մանրամասն տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971, էջ 713, ծան. 21, էջ 835։ С. Т. Еремян, Страна «Махелония» надписи Кааба-и-Зардушт («Вестник древней истории», 1967, № 4, стр. 55—56, пр. 64); Ս. Գ. Պետրոսյան, Փայտակարանը և Պարսպատունիքը մ. թ. 1-ին դարի երրորդ քառորդում («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 2, էջ 177)։

9 «Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 115։

10 «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Երևան, 1965, էջ 9, էջ 124, ծան. 9։

11 Լեռան անունը բաժանվում է abar (<*apar-h), aśt (<*yast), vim (<*vem)

Ապարհացիների հետ միասին Արշակունիները Կասպք-Փայտակարանում բնակեցրել էին նրանց ազգակից քսանթների մի հատվածը ևս։ Վերջիններիս ցեղանունն է պահել միջնադարյան Թալիշի شندان (Շանդան) բնակավայրը, որը գտնվում էր Աստարայի և Արդեբիլի միջև՝ ներկայիս սովետական սահմանում[12]։ Քսանթների էթնոնիմը հին իրանական լեզուներում ունենալու էր *ḫšant կամ *ḫšanθ տեսքը (որից էլ հունական Ξανθ-ου ձևը[13])։

Հին իրանական ḫš հնչյունակապակցությունը միջին արևմտաիրանական լեզուներից երկուսում՝ պարթևերենում և միջին պարսկերենում (ինչպես նաև սրանցից նոր պարսկերենին ժառանգություն մնացած բառերում և հայերենին անցած իրանական փոխառություններում) վերածվել էին š-ի[14]։ Այս օրինաչափությունից ելնելով՝ թե՛ պարթևերենի և թե՛ միջին պարսկերենի օգնությամբ կարող ենք վերականգնել شندان (Շանդան) տեղանվան նախատիպը, որն ունենալու էր *ḫšantān տեսքը։ Իսկ վերջինս բաղկացած է բուն ցեղանունից՝ *ḫšant (քսանթ) և ān հոգնակիակերտ մասնիկից։

Քսանթների ցեղանվան երկրորդ՝ *ḫšanθ տարբերակից է ծագում Ատրպատականի Ճաճճաճ ազգագավառի անվանումը։ Հարմար ստրատեգիական դիրք ունեցող այս ազգագավառը բռնում էր ներկայիս Զանջան (Զենջան) քաղաքի շրջակայքը[15]։ Այստեղ էին խաչաձևվում Ռեյից, Համադանից և Դինավարից եկող ճանապարհները, որոնք այնուհետև ընթանում էին մեկը դեպի հյուսիս՝ Արդեբիլ, իսկ մյուսը՝ հյուսիս-արևմուտք՝ դեպի Թավրիզ ու Մարաղա[16]։ Այս տեսանկյունից պատահական չէ քսանթների հայտնվելն այստեղ՝ Ատրպատականի ու Մեծ Մարաստանի սահմանագլխին՝ դելմիկների երկրի («Աշխարհացոյցում»՝ Դելումք) հենց թիկունքում։

Խորենացու հաղորդած վերոբերյալ տեղեկությունից բխում էր, որ «հյուսիսականների» 72 թ. ներխուժման ժամանակ Արշակունիների դեմ ապստամբել էին ոչ միայն Կասպք-Փայտակարանի, այլև հարակից շրջանների, ի թիվս որում և Ատրպատականի հյուսիս-արևելյան ու արևելյան մասերի ցեղերը։ Խորենացին դրանց կոչում է «բնակիչք լերինն, որ անուանեալ կոչի յիւրեանց լեզուն Պատիժահար գաւառ, որ է Գեղմանց լեառն, եւ ծովեզերեայք, եւ այսր եւս քան զնոսա»[17]։ Անտարակույս, դրանք եղել են գեղերը (գելերը), դելեմցիները (դելումք), կատիշները (կադուսիները) և նրանց հարևան մյուս ռազմիկ ցեղերը։ Բնական է, որ ապստամբության ճնշումից հետո, Արշակունիներն այնպիսի կարևոր ստրատեգիական դիրքով օժտված մի շրջան, ինչպիսին էր Ճանճանը (Զանջանի շրջակայքը), տեղաբնիկ ցեղերի տրամադրության տակ թողնել չէին կամենա։ Հենց այդ շրջանի ապստամբ-

---

բաղադրիչների, որոնցից իրանական yašt բառը նշանակում է «զոհ», vem-ը՝ «ժայռ, սար» (>հայ. վէմ)։

12 В. Ф. Минорский, История Ширвана и Дербенда X—XI веков. М., 1963, стр. 140—141.

13 Հունարեն Ξ (ξ) տառով էր արտահայտվում հին իրանական ḫš հնչյունակապակցությունը (հմմտ. Ξέρξης, Քսերքսես < Hšayarša; Ἀρταξέρξης, Արտաքսերքսես < Artahšasa, Artahšaθra; Πόντος Εὔξενος, Եվքսինյան Պոնտոս — «Սև ծով» < Πόντος Ἄξενος < իրան. aḫšaēna «մութ»)։

14 Հմմտ. հին իրանական ḫšayaθiya > միջին պարսկական šah «շահ, արքա»; ḫšaθra > šahr «երկիր, քաղաք»; ḫšapa > šap, šab «գիշեր»։

15 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 73։

16 В. В. Бартольд, Сочинения, т. VII, М., 1971, стр. 202.

17 Մ. Խորենացի, էջ 182։

ներին ճնշելուց հետո էին նրանք այստեղ բնակեցրել դահական քսանթ ցեղի այն հատվածը, որը և շրջանին տվել էր իր անունը. *ḫšanθ-ān > šanθān > Շանենան (հմմտ. *ḫšant-ān > šantān > Շանդան):

Ապառնների և քսանթների նման դահական ցեղամիության մեջ մտած երրորդ ցեղը՝ պիսուրները ևս իրենց մասնակցությունն էին բերելու այս արտագաղթին։ Ամենայն հավանականությամբ, Կասպք-Փայտակարանին հյուսիս-արևելքից հարող ծովահայաց շրջաններում վերաբնակված պիսուրների էթնոնիմն է պահպանված Ապշերոնյան թերակղզու անվան մեջ[18]։ Այս շրջանների ստրատեգիական կարևոր դիրքի (հատկապես «հյուսիսականներ»—Արշակունիներ հարաբերությունների տեսանկյունից) մասին է խոսում այն փաստը, որ Հռոմեական կայսրությունը փորձում էր իր հենակետերը ստեղծել Արևելյան Անդրկովկասի հենց այս մասում։ Ապշերոնյան թերակղզում, այժմյան Բաքվից հարավ-արևմուտք դտնվող Բեյուքդաշ լեռան ստորոտում, արևելաանդրկովկասյան ճանապարհի ճյուղերից մեկի մոտ գտնված լատիներեն արձանագրության վերծանումը ցույց տվեց, որ ժամանակին այստեղ կանգնած հռոմեական 12-րդ (Fulminata) լեգեոնը 84—86 թթ. ընթացքում, Դոմիտիանոս կայսեր օրոք (81—96), պաշտպանական ամրություններ է կառուցել լեռան վրա[19]։

Կասպից ծովին հարավ-արևմուտքից հարող շրջաններում Արշակունիներին ազգակից դահական (ապառնա-քսանթա-պիսուրական) էթնիկական տարրի առկայությամբ պետք է բացատրել ներքոհիշյալ իրողությունները ևս։

1. Կասպք-Փայտակարանի երբեմնի կենտրոն Փայտակարան բնակավայրը (գտնվում էր Կուրի և Արաքսի գետախառնուրդի շրջանում) կոչվում էր «քաղաք արքայութեանն Հայոց»[20]։ Անտարակույս, նկատի է առնվել հենց Արշակունի, և ոչ թե Մեծ Հայքի գահին բազմած մեկ ուրիշ արքայատոհմ։

2. Կասպք-Փայտակարանի «Նաւթնփորակեան բագինք» կամ «Նաւթն բագինք մեհենիցն» ուխտատեղին (այլ կերպ կոչվում էր Դարառու բագինք)[21] հայոց արքա Խոսրով Մեծ Արշակունին համարում էր «զիւր ազգին Արշակունեաց զհայրենեաց պաշտամանց տեղիսն»[22]։

3. Արաբ մատենագիրների կողմից այստեղ՝ «Մուղանի երկրում, Բաղի կողմերում» (Բաղը՝ հայ մատենագիրների Բատը, գտնվում էր Սավալան լե-

---

18 Ապշերոն (Ապշեռան, նաև Ապշարան, Ավշարան) տեղանունն ունի ցեղանվանական կազմություն։ Այդ են վկայում ինչպես տեղանվան մեջ առկա իրանական on կամ ān հոգնակիակերտ մասնիկը (on=an, քանի որ արևելաիրանական որոշ լեզուների, իսկ արևմտաիրանականներից՝ Բալիշերենին, հատուկ է ոնգալիներից առաջ ā>o անցումը), այնպես էլ իրանական ցեղանուններին բնորոշ նախաձայն a-ն (հմմտ. ամադ և մադ, ամարդ և մարդ, ապաուն և պաուն համարժեք ցեղանունները)։ Այսպիսով, քննարկվող տեղանվան մեջ առկա էթնոնիմի բուն ձևն է *պշեr-ը (կամ *պիշեr-ը), որը, հավանաբար, հունաձև [illegible]-ի տեղական արտասանությունն է. a-p(i)šer-ān>Apšerān, Apšeron:

19 К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, IV в. до н. э.—VII в. н. э., М.—Л., 1959, стр. 127, 342—345; П. Х. Тумбиль, Римская надпись I в. н. э., обнаруженная в пределах Азербайджана (Кабристан), («Доклады АН Аз. ССР», Баку, 1948, № 7, стр. 312—314); И. М. Джафарзаде, Древнелатинская надпись у подошвы горы Беюкдаш, там же, стр. 304—311.

20 «Ագաթանգեղայ Պատմութիւն», Վենետիկ, 1862, էջ 628։

21 Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 46, 51։

22 Ագաթանգեղոս, էջ 34։

ռան հյուսիսային փեշերին) հիշատակվում է Արշակ, ارشق անունով մի լեռ[23]։ Այն մոտավորապես տեղադրվում է Իրանական Ադրբեջանի Արշակ (Արշաղ) գավառի տարածքում՝ Սավալան-Արդեբիլ գծից հյուսիս[24]։ Բացառված չէ, որ սա Յաշտասար (այժմ՝ Հաշտասար)[25] և ابرشتويم (*Ապարհ-յաշտվեմ) անուններով հայտնի միևնույն լեռը լինի՝ Արշակ կոչված Արշակունիների «արքայական» ցեղի տոտեմ-նախնու կամ դրանից ծագած Արշակունի գահակալների դինաստիական անունով[26]։

4. Կասպք-Փայտակարանին հարավից հարող և արաբական աղբյուրներում Սաբիլան (Սաբալան, Սավալան) կոչված շրջանում ևս Արշակունիներն ունեին իրենց ցեղակիցները։ Ըստ Խորենացու, դրանք բնակվում էին Բատ և Ոգոմն գավառներում[27], իսկ Բատ գավառը պետք է տեղագրել Սավալան լեռից անմիջապես հյուսիս՝ Բատ (Բադ) կոչվող նույնանուն բնակավայրի շրջակայքում։ Խորենացին Արշակունիների այս ցեղակիցներին համարում է որդիները Իրանի գահակալ Դարեհ վերջին Արշակունու։ Իսկ այս ավանդական անձնավորության անվամբ ժամանակագրական առումով հանդես է գալիս Արշակունի արքայից-արքաներից նա, ով թագավորել է մ. թ. 41—71 թթ. ընթացքում՝ լինելով ժամանակակիցը Խորենացու հիշատակած Երվանդ վերջին ու Արտաշես II հայոց արքաների, ինչպես նաև հռոմեական Կլավդիոս, Ներոն ու Վեսպասիանոս կայսրերի[28]։ Վերջիններից Կլավդիոսը գահակալել է 41—54 թթ., Ներոնը՝ 54—68 թթ., իսկ Վեսպասիանոսը՝ 69—79 թթ. միջև։ Ինչ վերաբերում է նրանց ժամանակակից համարվող հայոց արքաներին, ապա դրանցից Երվանդ վերջինը Մեծ Հայքի գահակալ, հռոմեական դրածո Հռադամիզդ վրացին է (45—52), իսկ Արտաշեսը՝ Տրդատ I-ը (52—88, օրինական՝ 66 թ.)։

Հռադամիզդը հայ պատմական ավանդությանը հայտնի էր Երվանդ անունով[29]։ Իսկապես էլ, ըստ Խորենացու, հայոց Երվանդ վերջին թագավորը իրեն թիկունք է դարձնում հռոմեացիներին՝ «թողլով ի նոսա զՄիջագետս»[30]։ Իրականում խոսքը Հռադամիզդի մասին է[31]։ «Քարթլիս ցխովրեբան» նույն Երվանդին համարում է Փարսման Արմազեցու դաշնակից-զինակիցը, երբ Խորենացին նույնպես Երվանդի դաշնակիցն է համարում վրաց Փարսման թագավորին[32]։ Իսկ վերջինիս և պատմական անձնավորություն հանդիսացած վրաց Փարսման I (35—74) արքայի նույնությունը ցույց է տվել Հ. Մա-

---

23 «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», էջ 34։

24 Նույն տեղում, էջ 131, ծան. 36։

25 Ս. Տ. Երեմյան, Նշվ. աշխ., էջ 72։

26 Ричард Фрай, Наследие Ирана, М., 1972, стр. 245, 246, пр. 10.

27 Մ. Խորենացի, էջ 163։

28 Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940, էջ 358—359, Դ. Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 201։

29 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944, էջ 320, 418։

30 Մ. Խորենացի, էջ 164։

31 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 122։

32 Մ. Խորենացի, էջ 171։

նանդյանը[33]։ Հռադամիզդի կրած հայկական Երվանդ գահանունը (այն կարող էր հետևանքը լինել Երվանդունիների հետ վրաց արքայական տան ունեցած ազգակցության), ըստ երևույթին, պատճառ է դարձել, որ նրա գործունեությունը ևս հայ պատմական ավանդություններ վերագրեն մ. թ. ա. III—II դդ. սահմանագլխին իշխած Այրարատի Երվանդ թագավորին։ Ճիշտ նույն կերպ Տրդատ I-ի կրած հայկական Արտաշես գահանունը եղել է նրա և Արտաշես I-ի (189—160 թթ. մ. թ. ա.) թե՛ գործունեության նկարագրի, թե՛ կերպարների հայկական պատմական ավանդությունների մեջ միաձուլված հանգեպ գալու պատճառներից մեկը[34]։

Ասվածներից պարզվում է, որ հանձին Խորենացու «Դարեհ վերջին Արշակունու» գործ ունենք թվարկված հայ (Երվանդ—Հռադամիզդ, Արտաշես—Տրդատ I) և հռոմեացի (Կլավդիոս, Ներոն, Վեսպասիանոս) գահակալներին ժամանակակից Պարթևական Իրանի արքայից արքա Վաղարշ I-ի հետ, որն իրականում իշխել է 51—80 թթ. ընթացքում։

Ինչ վերաբերում է հյուսիսային Ատրպատականում բնակված «Դարեհ վերջինի որդիներին», ապա նրանք ներկայացնելու են Վաղարշ I-ի կողմից այստեղ բնակեցված դահական տարրի Արշակունիներին ազգակից տոհմացեղային ավագանուն։ Սրանց վերաբնակեցումը Բատ և Ոզոմն գավառների տարածքում պետք է տեղի ունեցած լիներ դահական էթնիկական տարրի Կասպից ծովին հարավ-արևմուտքից հարող շրջաններում հաստատմանը կուգընթաց։ Այսինքն՝ այն նույն ժամանակաշրջանում, երբ «հյուսիսականների» 72 թ. ներխուժումից և նրանց հարած խնդրո առարկա շրջանների տեզարնիկ ու եկվոր ցեղերի բարձրացրած ապստամբության ճնշումից հետո Արշակունիներն այստեղ էին բերել դահական ցեղերի՝ ապառնների, քսանթների և պիսուրների առանձին հատվածներ։

Այսպիսով, մ. թ. I դարի 70-ական թվականներին Կասպք-Փայտակարանի տարածքում և հարավից շրջաններում Արշակունի գահակալ եղբայրների՝ պարթևական Իրանի արքայից արքա Վաղարշ I-ի, Մեծ Հայքի գահակալ Տրդատ I-ի և Ատրպատականի թագավոր Բակուրի ջանքերով հաստատվել էին դահական ցեղերի առանձին հատվածներ։ Ապառնների, քսանթների և պիսուրների այս հատվածները կոչված էին Կասպից ծովից հարավ-արևմուտք ընկած և կարևոր ստրատեգիական դիրքեր գրավող հիշյալ շրջաններում հենարան ծառայել Արշակունիներին՝ «հյուսիսականների» դեմ նրանց մղած դժվարին պայքարում։

ДАХСКИЕ ПЛЕМЕНА ЮГО-ЗАПАДНЫХ РАЙОНОВ КАСПИЙСКОГО МОРЯ

С. Г. ПЕТРОСЯН

Резюме

Во второй половине I в. н. э. отношения между Аршакидами и сарматскими и вейнахо-дагестанскими племенами Северного Кавказа носи-

33 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 320։

34 Ա. Գարագաշյան. Քննական պատմություն հայոց, Թիֆլիս, 1895, էջ 242—250, Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван. 1971, стр. 432; Հ. Մանանդյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 353, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 12—14, Գ. Խ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 182։

ли враждебный характер. После знаменитого похода этих племен в 72 г., возглавляемого аланами, большинство племен, населявших юго-западные районы Каспийского моря, воспользовавшись этим, восстали против Аршакидов.

Это заставило братьев-венценосцев Аршакидов (Вологеза I — шахиншаха Ирана, Тиридата I — царя Великой Армении, Пакора — царя Атропатены) предпринять ряд действий в целях защиты прикаспийских границ государств, входивших в Аршакидскую конфедерацию. Результатом этих действий явилось то, что на этих землях обосновались дахские племена: апарны, ксанты и писсуры (эти племена северо-восточного Ирана и юга современной Туркмении были восточноиранско-скифского происхождения). Они, по соображениям Аршакидов, должны были стать опорой их власти в этих прикаспийских землях.